

ԳԱՅԼԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս.Ալ.Ստեփանյան

Միշտ չէ, որ գրական արտահայտման հնարանքն իր գործածության մեջ զարգացում է ապրում: Նույնը չենք կարող ասել գայլի խորհրդանիշի մասին: Արդիականության մեջ գայլի խորհրդանիշի նկատմամբ մեծացող հետաքրքրասիրությունը թույլ է տալիս քննումը կատարել պատմական զարգացման համայնապատկերում:

Իր ավանդական նշանակության մեջ գայլը հանդես է գալիս մարդու ու նրա կենսակերպի զարգացման հակառակորդ: Ըստ աստվածաշնչի գայլը մարդու մեջ տննում է իր գոհին: Առաջ է գալիս անհավասար ուժերի մասին դրույթը, որը դուրս է աստծո և մարդու հարաբերություններից. «Գայլը և զառը միասին կարածեն,...» (1, էջ 849), «Եւ գայլը կբնակուէ զառի հետ,...» (1, էջ 797): Այս հակադրության լավագույն նկարագրությունը Աթաբեկ Խնկոյանի «Գայլն ու զառը» առակն է:

Գրականության զարգացման համայնապատկերում գայլապատման արմատները խորանաում են հին հունական ու հռոմեական առասպելաբանության մեջ: Հռոմ Քաղաքի հիմնադիրներ, երկվորյակ եղբայրներ Հոմուլոսը և Վեմուսը ըստ առասպելի մեծացել են Մարսի կողմից ուղարկած մայր գայլի կաթով, ինչը պատկերված է հռոմեական արվեստում: Այս եղբայրները գրականության մեջ մտան որպես վայրի գազանի կաթով մեծացած երեխաներ: Մոգության ու կախարդանքի հունական աստվածուհի Հեկատան, որը սիրում էր գազաններին, ունի արվեստի շատ գործեր՝ գազանների, այդ թվում գայլի ուղեկցությամբ: Որոշ ժողովուրդներ նույնիսկ ընդունում են իրենց սերումը գայլից, թուրքերի նախնայրը համարվում է մայր գայլը: Գերմանական դիցաբանության մեջ հիշատակվում է Գեր և Ֆրենկի գայլերի մասին, որոնք ռազմի դաշտում իբր հետևում էին պայքարին. հարձակվում՝ դիակների վրա: Հայ գրականության մեջ առասպելական կերպար է Գայլ Վահանը, որը որպես պատմական հերոսական կերպար հայ արդի գրականության մեջ ունի նոր գեղարվեստականություն: Դրանք են Վազգեն Սարգսյանի հիշատակին լույս տեսած Ջ. Մելիքյանի «Գայլ Վահան» պատմավեպն ու Է. Ավագյանի «Գայլ Վահան» վիպակը:

Համաշխարհային գրականության մեջ առկա Wolfliteratur (««Գայլ»-ի գրականություն») չարքի լավագույն գործերից Հերման Հեսսեի «Տափաստանի գայլը» («der Steppenwolf») վեպի հայերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Արա Առաքելյան) ազգային գրականություն բերեց գայլի այլաբանական նոր կերտում, որն իր բազմաշերտությամբ համադրվում է մարդկային Ես-ի կառույցին:

Այն ներկայացնում է խորհրդանիշերի մի խառնուրդ, որտեղ խտացած դժգոհությունը տարրալուծվում է բոլոր ուղղություններով, դրանով իսկ տալիս թե՛ անհատի թե՛ հասարակության քայքայվող էությունը: Հեղինակն իր գեղարվեստական նպատակաուղղվածությունը համարում է մարդկային հոգու բազմաառուցվածքայնությունը: Վերջինս, սակայն, չպետք է համարել անհատական, պատահական, այլ ընդունել այն որպես մարդուն բնությանը կապող ու միացնող ռեալ հանգամանքը, ուստի որի յուրաքանչյուր անհատի ներսում կան բազմաբնույթ ձեռավորումներ, որոնք երևան են գալիս տարիքային տարբեր ժամանակահատվածներում՝ մեկ պարզամտորեն, մեկ հանկարծակիորեն: Հոգու ամբողջացումն իր մեջ պահպանում է այդ բազմիմաստությունը: Տափաստանի գայլի ներքին քայքայումը տեղի է ունենում բուդդայականության սկզբունքով, ուստի որի բարին ու չարը ոչ միայն պայմանավորված են իրարով, այլ կազմում են մարդկային բանականության բաղկացուցիչ մասը: Խնդիր է դառնում հոգում խորացող անձնական ճգնաժամը, որի մասին վեպի գլխավոր կերպարը՝ 48 տարեկան Հարրի Հալերը իր ծննդյան 50-ամյակին գրել է օրագրում: Նա 10 ամսով բնակություն է հաստատում շվեյցարական մի քաղաքում, ուր այցելել էր 25 տարի առաջ: Այստեղ ուսումնառության ընթացքում հաղթահարում է հոգեկան խոր անկումներ: Հալլերը մեծացել է բուրժուական ընտանիքում, գրում է բանաստեղծություններ, զբաղվում է գիտությամբ, արվեստով, գրում է գրքեր, դառնում է Մոցարտի, Գյոթեի լավ գիտակ, ունենում է հակապատերազմական

հայացքներ, որոնց լավ ծանոթ է հասարակությունը: Ճակատագրի հասցրած հարվածների արդյունքում կորցնում է հեղինակությունը: Փորձելով մասնագիտության մեջ իրեն գտնել, Հալլերը հայտնաբերում է իր մեջ աճող դժգոհության զգացումը: Նա սկսում է ճանապարհորդել, որից հետո ընթերցողը նրան գտնում է առանց մասնագիտության, առանց ընտանիքի, առանց հայրենիքի և միշտ ճանապարհին: Բանաստեղծության ու երաժշտության միջոցով նա վայելում է բերկրանքի գեղեցիկ պահեր, ինչը սակայն նրան չի ուրախացնում: Սյուժետային այս հանգամանքով տափաստանի գայլը միանում է Ֆաուստին: Վերագտնումի միտքը հետևում է նրան, ամենուր սփռված քաղաքացիական կարգապահության մեջ տենչում է հայտնվել կատարյալի հետքի վրա: Յավոք, նրան չի հաջողվում գտնել այն, իր մեջ գոյություն ունեցող երկու հոգիների պատճառով: Եվ ապրում է որպես տափաստանի գայլ՝ երկակի գոյությամբ: Մի կողմում կրթված, նյութախնա ապահով բուրժուական հայացքներով, երաժշտական, փիլիսոփայական ու գեղեցիկ մտքերի հանդեպ մեծ հետաքրքրություն ցուցաբերող անհատն է, մյուս կողմում՝ գայլն է՝ բուրժուական հասարակարգի դեմ կասկածանքով լեցուն հեղափոխականը: Մարդու և գայլի հակադրությամբ հայտնվում են կողք կողքի ոգին ու բնագոր: Այս միացության մեջ նա նույնան գիտակից, ինչքան որ մենակ ու կասկածամիտ: Եսի բազմաշերտությունը մղում է նրան ինքնասպանության, որտեղ նա փորձում է գտնել այն հանգստությունն ու մաքրությունը, որոնց բուրմունքը ձգտում էր Հալլերին փրկել: Երկու բևեռների միջև սրված պայքարում Հարրին ընտրում է ինքնասպանությունը, հիշելով ավստրիացի գրող Ադալբերթ Ծորիֆտերին, որն անբուժելի հիվանդության տառապանքներին վերջ տալու համար ամեն ինչ փորձել է կոկորդ: Իր որոշման բարձրակետում Հալլերին փրկում է հանդիպումը կուրտիզանուհի Հերմինեի հետ: Վերջինս Հալլերին սովորեցնում է ծիծաղել, ապրել նոր շիջմանով: Հալլերի և Հերմինեի մեկը մյուսին լրացնող կապը կանգնեցնում է նրանց նույն ճանապարհին՝ որպես սրբեր: Մարդային հոգու մեջ շերտավորված կերպավորումներից եւ ոչ մեկը չունի այդ ներդաշնակության, այդ մաքրության բուրմունքը: Դա Աստծու ճանապարհն է, որը ձգվում է մարդու հոգու միջով: Այս հանգստությանն են ձգտում Հեսսեի հերոսները՝ Սիթհարթան, Վազնիրը, Բլայստը, Հալլերը: Տափաստանի գայլը Հարրին է, որն ապրում է գայլի (ազատություն, վայրենություն, սարսափ, ուժ) և մարդու (նուրբ, խելացի, կրթված) խառնուրդով: Արդյունքում նրան վիճակվում է տառապել, որից ազատվելու համար նա փորձում է ծիծաղել, դրանով իսկ մոտենալ անմահներին. «Օրերից մի օր ես կսովորեմ՝ ծիծաղել Ինձ էր սպսում Պաբլոն: Մոգարտն սպասում էր ինձ» (2, էջ 221): Անմահներին հասնելու հույսով ապրող Հեսսեն Նիցշեի Գերնարդն է: Իսկ մարմնի ստրկացումից ազատվելու համար Հեսսեն դիմում է էրոտիկայի և թմրանյութերի օգտագործմանը: Այսպես ստեղծվում է արտաքին ու ներքին ներդաշնակության անվերջանալի հակադրությունը: Հումորի երեւակայական աշխարհով բնորոշվում է միակ գերիշխող աշխարհը, որը սովորեցնում է ծիծաղել և որտեղ աստվածներն են շրջում: Դրա համար Հեսսեն դիմում է մոգական թատրոնի օգնությանը: Գաղափարական այս կողմնորոշման մասին է խոսում Ծոնեֆան Բոլերը «Ազգի խարիզման» հոդվածում, ըստ որի թատոնը՝ որպես զարհուրելի վիճի ու պանդեմոնիում, այսօր էլ գործում է ողջ մարդուն իր ամենաստորին ու բարձրագույն կրթերին հակադրել հենց իրեն ու հանել իրենից վեր «առ երկինք եւ դժոխք»: «Թատրոնն ի վիճակի է հիմնովին վերափոխելու եւ առաջ բերելու «ժողովրդական ոգու այն վերածնունդը, որից կախված է գերմանացիների եւ դրանով նիջնորդավորված, նաեւ մարդկության ապագան» (3, էջ 182):

«Տափաստանի գայլը» վեպի թարգմանական նշանակությունը պայմանավորված է անհատի ինքնահաղթահարման անդրադարձներով, որոնց ներգործումով գեղարվեստական մտածողության մեջ ժխտվում է ինքնասպանությունը եւ ուտոպիստական տրամադրությունը միջնորդում է հերոսին ազատվելու իր էության մեջ ուռճացող գազանային հակումներից, այստեղ՝ գայլային: Անդրադառնալով վեպի գեղարվեստական էությանը թարգմանիչ Արա Առաքելյանը դիտում է. ««Տափաստանի գայլը» վեպ է հիվանդ հասարակության եւ հիվանդ մարդու մասին: Հերոսը տառապում է մի հիվանդությամբ, որ հոգեբանության մեջ հայտնի է երկվություն (Ambivalenz)» անունով: Հիվանդության հիմքում դնելով մարդու եւ գազանի հակասությունը՝ Հեսսեն իր վեպին հաղորդում է ոչ միայն սոցիալական, այլ քաղաքական բովանդակություն՝ դարձնելով այն ուղղակի գեղարվեստական անդրադարձը դարասկզբի եվրոպական ավերիչ պատերազմների ու հեղափոխությունների: Վեպի գաղափարական շեշտադրումների առումով կարծես է նաեւ այն, որ ոչ միայն պատկերվում է հիվանդությունը, այլ բուժման դեղատոմս է առաջարկում, դա վեպին հաղորդում է բարոյախոսական, ինչ-որ չափով դաստիարակության վեպերին բնորոշ գծեր» (2, էջ 226):

Մարդու մեջ գայլային դրսևորումների անդրադարձ ենք տեսնում Հովհաննես Թումանյանի «Գեղը» պատմվածքի մեջ ներգրավված գրույցներում, որոնք հեռու չեն իրականությունից եւ դարձնակա՞ն ծրագրի շրջանակներում ունեն միայն ճանաչողական եւ գայլի յորպէս գիշատիչ զագանի հետ մարդու բախումների եւ դրանցից խուսափելու դաստիարակչական նշանակությունը: Թումանյանի շարադրանքի լեզվական ու ռճական պարզությունն ու սահունությունը հեռու է Հեսսեի այլաբանական ձեւավորումներից: Գաղափարական առումով երկու գրողների ստեղծագործական երեւակայությունը գործ ունի մարդ եւ գայլ հակադրության հետ: Երկու մեծ խոհափիլիսոփաներ, որոնց միավորում է մարդու մեջ բնության եւ կենդանական աշխարհի գոյության ճանաչելիության ոգին: Պատմությունների իր շարքի համար Թումանյանը օգտվել է տասնվեց գրավոր եւ բանավոր աղբյուրներից, որոնցից դուրս գրել տասը էջի չափով դիտողություններ: (Սարսափելի բան է գիլի ոհմակը, Գեղը երբ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է, Գեղը սովից ավելի համարձակ ու վտանգավոր է դառնում, Սովն ինչ ասես կանի, ձեզ մատաղ: Սովը մարդն էլ կդարձնի սարսափելի, ուր մնաց էն անտառի գիլին)

Գայլի խորհրդանշը ազգային հոգեբանության մեջ այնուհանդերձ պահպանում է Գայլ Վահանի հերոսական կերպարի բովանդակությունը: Սակայն հռոմեական պղնձյա գայլի եւ հայ առասպելյաց գայլի (*Եվ տոտենը եղել է մեր - գայլ*) (4, էջ 625) միտումով Չարենցի ստեղծած գայլը հալածվում է հայոց աշխարհում: Այն իր թույլ, բզկտված մարմնով խորհրդանշում է Հայաստան աշխարհի կեղեքումն ու մասնատումը.

*...Տեսնում եմ ահավասիկ
Հին դարերի խորքում, ուղիներով մռայլ,
Քաղցած, քոտտ, անբուրդ, դեպի յլաղը Մասիս
Քայլում է առասպելյաց մեր գայլը* (4, 625):

Իր բովանդակությամբ ու իմաստային տարբերակման ծավալով Հեսսեի այս վեպն ունի սոցիալ-հոգեբանական, պատմա-քաղաքական ու դաստիարակչական նշանակություն: Ըստ այդմ այն գրական քննումների մեծ կարիք ունի:

Գրականություն

1. Աստուածաշունչ, 1989:
2. Հեսսե Հ., Տափաստանի գայլը, Ե., «Նաիրի» հր., 2003, 239 էջ:
3. Արտասահմանյան գրականություն, 2004, թիվ 3:
4. Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 4, Ե., Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1968, 625 էջ:

Символ “Волк” в армянкой литературе.

С.А.Степанян

Резюме

Статья рассматривает новые импульсы формирования художественной мысли в национальной литературе, благодаря которым расширяются вѣ зможности ее приобщения к мировым ценностям.

Армянский перевод романа Г.Гессе "Степной волк" ввѣл в национальную литературу новое в символ “волк”, что пѣ зволило найти определённые грани художественного мышления в произведениях армянских авторов.

Wolf Symbol in the Armenian literary.

S.A.Stepanyan

Summary

The article examines new literary impulses in national literature which give it chance to be developed towards the world values.

The Armenian translation of Steppen wolf by Hermann Hesse in new understanding of the conception „wolf” in national literature that allows to find certain facets of artistic views in the works of Armenian authors.